№ 112 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 28 **1903** ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 28 № 112

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երեւանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիանամեայ յոբելեանը. Անգլիա, Ռուսաստան և Պարսկաստան. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Աստղը։

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

—

Երեկվայ համարում խօսելով Բագուի վիճակագրութեան մասին, մենք ասացինք, որ գործին գլուխ կանգնած անձերը ցանկանում են նախօրօք և մասամբ էլ զուգընթաց պարզել մի շարք հետաքրքրական հարցեր, որոնց թւին պատկանում է Բագուի նաւթային շրջանի արդիւնագործական կեանքը։

Ինչ պէտք է լինի Բագուի շրջանը ապագայում—ի հարկէ դժուար է ասել, բայց զարմանալի չէ, եթէ նա նշանակութիւն ունենայ ոչ միայն իբրև նաւթային կենտրոն, այլ և իբրև արդիւնագործական մի աչքի ընկնող կէտ։ Մի քանի հանգամանքներ նպաստում են Բագուի ընդհանուր արդիւնագործական զարգացման։ Նաւթը, իբրև էժան վառելիք միջոց է տալիս զարգացնելու գործարանական կեանք։ Այն հանգամանքը, որ նա գտնվում է այնպիսի ծովածոցում, որ չէ սառչում երբէք և որտեղ կայ մի ընդարձակ և ապահով նաւահանգիստ, կարողութիւն է տալիս նրան մշտական հաղորդակցութիւն պահպանել, թէ Անդրկասպեան երկրի և թէ Պարսկաստանի հետ։ Եւ եթէ բամբակը, բուժաբը, բուրդը մեր երկրից պէտք է գնան Մոսկվա և Լօձ՝ այնտեղ գործարանական մշակութեան ենթարկվելու և ապա իբրև պատրաստ ապրանք՝ նորից բերվելու մեր երկիրը և ուղարկվելու Պարսկաստան, ինչո՞ւ նրանք կարող չեն գործարանական մշակութեան ենթարկվել Բագուի նման մի տեղում, որ ունի էժան վառելիք և մօտ է հում նիւթերի շրջաններին։

Մենք չը գիտենք, ի հարկէ, թէ ինչ կը լինի ապագայում և թէ արդեօք ուրիշ կենտրոններ չեն ստանայ իրանց աշխարհագրական դիրքի և ուրիշ նպաստաւոր հանգամանքների շնորհիւ աւելի ևս մեծ արդիւնագործական նշանակութիւն, քան Բագուն, բայց առ այժմ Բագուի առաջադիմութիւնը և զարգացումը ակներև է և անհրաժեշտութիւն է զգացվում ուսումնասիրելու նրա ներկայ վիճակը և պարզելու նրա արդիւնագործական զարգացման պայմանները։

Բագուի առաջիկայ վիճակագրական ուսումնասիրութեան ժամանակ նպատակայարմար կը լինէր ուսումնասիրել նաև նրա կենսական պիտոյքների սպառման վիճակը։ Բագուն, իբրև բազմամարդ կենտրոն և հարուստ քաղաք դառնում է դէպի ինքը, թէ մեր երկրից և թէ մեզ շրջապատող տեղերից, ամէն տեսակ մթերքներ։ Շատ նիւթեր, որոնք առաջ ուղարկվում էին Թիֆլիսի վաճառանոցը, այժմ ուղարկվում են Բագու։ Երկրի մէջ հանդէս են եկել նոր արհեստներ և պարապմունքներ, որոնք աչքի առաջ ունեն մեր քաղաքների կեանքի զարգացող պահանջը։ Նպատակայարմար կը լինէր ծրագրի մէջ մտցնել և ուսումնասիրութեան այդ կէտը, որով Բագուն կապված է և օրէցօր աւելի ու աւելի կապվում է ուրիշ արդիւնագործող շրջանների հետ։

Անկասկած ցանկալի է, որ Բագուի մէջ թէ առհասարակ ձեռնհաս քաղաքացիները և թէ գործարանական շրջանի գործողները ամէն պատրաստականութեամբ նպաստէին, որ սկսված վիճակագրական հետազօտութեան գործը առաջ ընթանայ աջողութեամբ և այդպիսով տայ մեզ հիմնաւորապէս կատարված ուսումնասիրութեան մի պատկառելի փորձ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 24-ին

Ներկայ տարին, կարծէք, Երեւանի համար տօնական տարի լինէր, ի նկատի ունենալով մի շարք ներկայացումները, որոնք տեղի ունէին ամբողջ տարվայ ընթացքում։ Երկար ժամանակ առաւաց լեզուով տալիս էր շարունակաբար ներկայացումներ Ռուսաստանից եկած դերասանական մի խումբ։ Զատկի տօներից սկսած մի շարք ներկայացումներ տալիս էին տ. Սիրանոյշ մեր արհեստաւոր և միջին դասակարգի մարդիկ բաղդ ունեցան մի խումբ օրիորդների և երիտասարդների ջանքերի շնորհիւ տեսնել էժանագրած գներով ժողովրդական ներկայացումներ։ Այս բոլորից յետոյ աննկարելի կը լինէր մեր դրացի Թուրք ժողովրդի անտարբեր մնալը և ահա նրանք էլ հոսանքի հետ գնալով, այս ձմեռվայ սեզօնում տուեցին Թուրքերէն լեզուով երկու ներկայացում։ Վաղուց չէ, որ այստեղի Թուրքերից մի քանի անհատներ հասկացան բեմի նշանակութիւնը։ Որքան յիշում ենք, առաջին անգամ Թուրքերէն ներկայացում քաղաքում տեղի ունեցաւ անցեալ տարի, և Թուրքերի համար այժմ էլ այնքան օտարոտի և պախարակելի է Թուրք բեմ դուրս բերելը ցեղի պակասութիւնները և տգեղ կողմերը, որ այս երկրորդ ներկայացման ժամանակ, որ տեղի ունեցաւ քաղաքային կլուբի դահլիճում, ամառս 23-ին, ոչ միայն կնոջ դերի համար 10—12,000 Թուրք ժողովրդի միջից մի կին դերասանուհի չէ ճարվել, այլ և այդ գեղեցիկ գործի ձեռնարկողներից մէկը պատմեց, որ ներկայացման նախընթաց օրը մի պատանեկան նամակ էր ստացվել։

Ինչ և իցէ, ուրախալի փաստը կայ։ Դժուարին ճանապարհ, բայց գեղեցիկ սկիզբն, որը տանում է դէպի լոյս մեր դրացի Թուրք ժողովրդի այս սկզբնական քայլերը չնորհաւորում ենք անկեղծ սրտից։

Այժմ մի երկու խօսք ներկայացման առիթով։

Այս անգամ խաղում էին «Բաղի վա կարդաշ» պիեսը (քոյր և եղբայր) հեղինակութիւն Վ. Մադաթեանի։ Վ. Մադաթեանը անյայտ մարդ չէ։ Նա լաւ ուսումնասիրել է մեր հայ և Թուրք միջին և ստորին դասակարգերի նիստ ու կացը և սովորութիւնները, գրել է մի քանի վոդեվիլներ, որոնցից «Կրոնի Կրոնի»-ը այնքան ընդունված է մեր բեմի վրա. ահա այդ նոյն Մադաթեանը. քաջ տեղեակ Թուրքերէն լեզուին գեռ նա 1881 թ-ին գրել է յիշեալ պիեսը, որ տպագրված է 1894 թ-ին հայերէն տառերով։

Պիեսն ունի մի լաւ առաւելութիւն. նա ձգձգված ու տաղտկալի չէ, բեմի վրա կեանք է երևում, թաջիրը իր գրքերով—դաֆտարներով և անբաժան զայլանով, պաշտօնեան իր բախչիներով, դատաւորը իր խղճի օրէնքներով և արձակած վճիռներով, մօլլաները իրանց քեաբինի խորհրդով, Թուրք կինը իր անթափանցիկ շղարշով և այլն։

Ներկայացումը անցաւ լաւ, որքան կարելի էր ապասել մի նոր սկսած գործից. դերակատարները գոհացուցիչ էին, բացի կնոջ դերից, որը կատարում էր խոպոպ ձայնով մի տղամարդ։

Ներկայացման ներկայ էին պ. Նահանգապետը, փոխ-Նահանգապետը, քաղաքագլուխը և բաւական հայեր։ Թուրքերից ներկայ էին նոյնպէս բաւական մարդիկ գլխաւորապէս երիտասարդներ, բայց և ոչ մի Թուրք կին։

Մի խորհուրդ Թուրք սիրողներին՝ ներկայացումները կրկնել շուտ շուտ, ուշադրութիւն չը դարձնել մուրքի վրա, տեղերի գները էժանացնել, հասարակութեանը գրաւելդէպի Թատրոն և որ գլխաւորն է, իրանց կանանց Թատրոն բերելով, օրինակ դառնալ ուրիշներին առանց քաշվելու տնտեղի բամբասանքներից։

Մոռացանք ասել, որ ներկայացման վերջում հեղինակը բեմ դուրս կանչվեց և ստացաւ արծաթէ մի ընծայ։

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ղարասուբազար, մայիսի 15-ին

«Մշակի» 99 համարում Զանգեզուրի Լօր գիւղից գրված էր, որ պտղատու ծառերի ծաղիկները ոչնչացնում է մի տեսակ որդ, որի մասին տեղեկութիւն էին խնդրում։

Սրանով յայտնում եմ, որ այդ որդերը, որոնք վնասում են տանձենիների և խնձորենիների ծաղիկները, յայտնի բզեզիցն է Rhynchites և տեղս կոչվում են ДОЛГОНОСИКЪ, և СЛОННИКЪ, որովհետև երկար կնճիթ ունի։ Այդ բզեզը (жучокъ), որ հասարակ ճանճի մեծութեամբ պղնձագոյն մի միջատ է, գարնանը ծառի պտղատու կոկոնները զարգանալու միջոցին իր երկար կնճիթովը տեղաւորում է ձուաները, որոնցից գոյանում է որդը հէնց ծաղիկների մէջ, և որոնցից թառամում է անչափահաս ծաղիկը։

Դրանցից ազատվելու միջոցներն են. 1) աշունքին տերևները վայր ընկնելուց յետոյ, ծառերից մաքրել քերիչներով մեռած կեղևները, որքան կարելի ամենավերին ճիւղերն էլ, առաջուց փռելով ծառի տակը որ և իցէ սփռոց, յետոյ հաւաքել և ցրել, յետոյ նոր մարած կիրով և կաւիճով, հասարակ ճերմակ հողով խառն, ճերմակացնել ծառի գոնէ բունը և խոշոր ճիւղերը։ 2) Գարնանը կանուխ, ծառերը զարթնելու ժամանակ թափահարել ճիւղերը, փռելով առաջուց ծառի տակ սաւան, որով ծառի վրա եղած բզեզները կարելի է հաւաքել և ոչնչացնել։ 3) Ամենաարմատական միջոցն է, թէպէտ և թանգ արժէ, մարած կիր և ճերմակ հողով ու ջրով խառն մի քիչ թանձր կաթ շինել, և յետոյ ջրի մեքենայով ծառերի բոլոր ճիւղերը, չը բացված կոկոնները սրսկել այնպէս, որ ամբողջ ծառի թագը ճերմակ լինի։ Այդ պէտք է անել կանուխ գարնանը, դեռ ծառերը չը զարթած, դրանով ուշանում է զարթնելը մի քանի օր, բզեզները չեն կարող ժամանակին ձուդնել, որով ծառը չատ առողջ ծաղիկ կունենայ։ Այս միջոցը օգտակար է և ուրիշ մի քանի տեսակ «Մինխիտ» միջատների դէմ։

Օ. Բէնգլէրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուլավէր, մայիսի 20-ին

Շուլավէրի նորաբաց բուժարանը ամսիս 20-ին ստացաւ պ. Միքայել Արամեանից 500 ռուբլի նպաստ, աղքատ գիւղացոց դեղերի և այլ բժշկական պէտքերի համար, ուստի թոյլ տուէք, խնդրում ենք, «Մշակի» միջոցով մեզ, իբրև բուժարանի տնտեսական մասի կառավարիչների՝ մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու յարգելի պարոնին՝ իր առատաձեռն նուիրատուութեան համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՏՂԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԷՔԻԱԹ

—

Կորչի, ձայն տուեց ամբոխը։—Կեցցէ խաւարը։ Միայն վիշտ և անէծք է բերում մարդկանց աստղերի լոյսը... Մահ աստղակրին։

Եւ սպառնալից յուզվում էր ամբոխը և կատաղի մռնչիւնով ճիգ էր թափում հարբեցնել ինքն իրան ու խեղդել լոյսի դէմ արտասանած իր մեծ պարսաւանքի արհաւիրքը։ Եւ շարժվեց նա դէպի Ադէիլը։ Բայց աստղակրի ձեռքին չափազանց պայծառ էր շողշողում աստղը և մարդիկ չը կարողացան մօտենալ նրան։

—Սպասեցէք, եղբայրներ, յանկարծ լսվեց ձեր քուրմի՝ Սաթչօյի ձայնը։ Ծանր մեղք էք վերցնում ձեզ վրա, լոյսը անիծելով։ Ի՞նչին ենք աղօթում, ինչով ենք ապրում, եթէ ոչ լոյսով։ Սակայն դու էլ, զաւակս, դարձաւ նա Ադէիլին,—դու էլ պակաս մեղք չես գործել, վայր բերելով աստղը երկրի վրա։ Ճշմարիտ է, մեծ Բրահման ասել է՝ «երանի նրան, ով ձրգտում է դէպի աստղերը»,—բայց իրանց իմաստութեամբ յանդուգն մարդիկ ուղիղ չեն հասկացել համաչխարհային մեծ առածի խօսքը։ Նրա աշակերտների աշակերտները բացատրեցին ամենաիմաստունի մութ խօսքի իսկական իմաստը. մարդը պէտք է ձգտի դէպի աստղերը լոկ միտումներով, իսկ երկրի երեսին խաւարը այնքան նուիրական է, որքան երկնքում լոյսը։ Եւ ահա այդ ճշմարտութիւնը դու արհամարհեցիր քո ամբարտաւան խելքով։ Դէհ զղջա, զաւակս, դէհ ցցիր աստղը, և թող երկրի վրա թագաւորէ նախկին խաղաղութիւնը։

—Իսկ դու կարծում ես, եթէ ես աստղը դէն գցեմ,—խաղաղութիւնը արդէն երկրի վրա կորած չէ ընդ միշտ, քմծիծաղ հարցրեց Ադէիլը։

Եւ սարսափով զգացին մարդիկ, որ Ադէիլը ճշմարիտ էր ասում, որ նախկին խաղաղութիւնը էլ չի վերադառնայ երբէք։

Այդ ժամանակ առաջ եկաւ ծերունի Թասուը, խելօքների ուսուցիչը, գիտութեան լոյսը։

—Դու անխոհեմ ես վարվել, Ադէիլ, և ինքդ իսկ չես կարող չը տեսնել քո անխոհեմութեան պտուղները, խօսեց նա։—Ինութեան օրէնքների հանճարն կեանքը դանդաղ է զարգանում, և դանդաղ են մօտենում կեանքին հեռաւոր աստղերը, որոնց աստիճանաբար մօտենող լոյսի հետ, աստիճանաբար բարեփոխվում է և կեանքը։ Բայց դու չը կամեցար սպասել, դու ինքնավստահ պոկեցիր աստղը երկնքից և պայծառ լուսաւորեցիր նրանով կեանքը։ Եւ ինչ դուրս եկաւ։ Նրա անկազմակերպութիւնները խիստ աչքի են ընկնում, և կեանքը ներկայանում է մեզ կեղտոտ, խղճալի ու այլանդակ։ Բայց մենք առաջ չէինք նկատում, որ նա այդպէս է, և մենք հարցը դրա մէջ է։ Մեծ իմաստութիւն չէ պոկել երկնքից աստղը և լուսաւորել նրանով կեանքի այլանդակութիւնները։ Ոչ, յանձն առ կեանքի բարեփոխութիւնների սև, ծանր աշխատանքը, այն ժամանակ կը տեսնես, հէչտ է արդեօք մաքրել նրան դարերով կիտված կեղտերից, կարելի՞ է արդեօք լուսանալ այդ կեղտը թէկուզ ամենափայլուն լոյսի մի ամբողջ ծովով։ Այդ բանի մէջ որպիսի երեւեխայական անփորձութիւն, պայմանների և կեանքի օրէնքների որպիսի՞ անհասկացողութիւն։ Եւ ահա, ուրախութեան փոխարէն դու բերիր մեր երկիրը թախիծ, խաղաղութեան փոխարէն—պատերազմ։ Իսկ դու կարող էիր, և այժմ էլ կարող ես լինել կեանքի համար օգտաւէտ. ջարդիր աստղը, վերցրու նրանից գէթ մի փոքրիկ կտոր և այդ կտորը կը լուսաւորէ կեանքը ճիշտ այնքան, որքան հարկաւոր է՝ բեղմնաւոր և խելացի աշխատանքի համար։

—Դու ճիշտ ասացիր, Թասու, պատասխանեց Ադէիլը։—Ուրախութիւն չը բերեց այստեղ աստղը, այլ վիշտ, խաղաղութիւն չը բերեց, այլ պատերազմ։ Ես այդ չէի ապասում, երբ դիք-դիք ժայռերով փորսող էի տալիս դէպի աստղերը, երբ շուրջս սայթաքվում և ընկնում էին իմ ընկերները անդունդի մէջ... Ես մոռացում էի. դէթ մէկը մեղանից կը հասնէ նպատակին և կը բերէ աստղը երկիրը և պայծառ լոյսի մէջ կը տիրէ երկրի վրա պայծառ, լուսաւոր կեանք։ Բայց երբ ես կանգնեցի հրապարակի մէջ, երբ երկնային աստղի լոյսի տակ տեսայ ձեր կեանքը, ես հասկացայ, որ լոյսը ձեզ հարկաւոր էր միայն անմատչելի երկնքում, որպէս զի խոնարհվէք նրա առաջ կեանքի հանդիսաւոր բոպէներին։ Իսկ երկրի վրա ձեզ համար ամենից թանգը խաւարն է, որի մէջ կարելի է թաղնվել միմեանցից և, որ գլխաւորն է, գոհ լինել իր անձով, իր մութ, բորբոսից մաշված կեանքով։ Սակայն դեռ աւելի շատ քան առաջ, ես զգացի, որ անկարելի է ապրել այս կեանքով, որ մեր արիւնաշաղախ կեղտի իւրաքանչիւր մի բիծը անդադար աղաղակում է դէպի երկինքը... Սակայն կարող

Ի նկատի ունենալով բուժարանի լայն հիմունքները՝ ձրիաբար բժշկական օգնութեան հասնել թէ խորհուրդներով և թէ դեղերով, գիւղական աղքատ դասակարգին, այլ և բուժարանի, որպէս նորաստեղծ հիմնարկութեան, սուղ դրութիւնը, յիշեալ գումարը, իրօք որ չչափելի օգնութիւն է հանդիսանում ներա համար։

Ցանկալի է, որ այդ համակրելի օրինակը բարի նախանձ յարուցանէր և ուրիշների մէջ։

Տնտեսական մասի կառավարիչներ՝ տանուտէր Վ. Մեհրաբեանց, Ե. Խուդադեան, Շ. Միրզոյեանց, Մ. Մատթէոսեանց, Բ. Տէր-Պողոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, ռուսաց ստաղագիտական ընկերութեան անդամներից մէկը առաջարկել է այդ ընկերութեան՝ հիմնել Կովկասում, ամենաբարձր լեռներից մէկի գագաթի վրա, մի հակայական դիտարան, որ կարողանար համեմատվել աշխարհիս լաւագոյն դիտարանների հետ։ Այս միտքը իրագործելու համար հարկ կը լինի գործ դնել մեծ դրամագլուխ, որ կարելի է, առաջարկութեան հեղինակի կարծիքով, ժողովել նուէրների ստորագրութիւն բանալով ամբողջ Ռուսաստանում։

—

Առաջիկայ ամառվայ ընթացքում Ռուսաստան կը գան և, ի միջի այլոց, կայցելեն նաև Կովկասեան մի քանի քաղաքներ Ֆրանսիայի և Գերմանիայի բարձրագոյն և միջնակարգ ուսումնարանների ուսանողները։ Ամենից առաջ Պետերբուրգ կը հասնեն Մարսէլի պոլիտեխնիքական ուսումնարանի ուսանողները։

—

Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում այս տարի իրանց ուսման ընթացքն աւարտեցին 18 հոգի, որոնցից մէկը ստացաւ ոսկեայ և չորսը—արծաթեայ մեդալներ։

—

«Кавк. Мин. Воды» լրագրին հեռագրում են Ասխաբադից. «Մորեխը յաղթում է։ Այժմ արդէն անհնար է մաքառել նրա դէմ։ Հրաշալի, անասելի—ընդարձակ, կանաչ դաշտերը դարձան անապատ։ Մորեխը շարունակ առաջ է գնում անզսպելի յաղթական գնացքով։ Անդրկասպեան երկիրը, իբրև պատերազմում պարտված, անձնատուր է եղել մորեխին։ Այն ինչ չարիքը կարելի էր արմատականապէս ոչընչացնել, եթէ տեղեկութիւնները մորեխի երևալու մասին չը ստացվէին չափազանց ուշ։ Կռիւը մորեխի դէմ սկսվեց այն ժամանակ, երբ մորեխն արդէն թև էր առել, և ձեռք առնված միջոցներն ևս բաւարար չէին։ Ազգաբնակութիւնը կարօտ է օգնութեան»։

—

«Новое Время» լրագրում կարդում ենք. «Правит. Вѣст.»-ում տպագրված էր հերքումն «Times» լրագրի սուտ տեղեկութեան դէմ ներքին գործերի մինիստր Պլէվէի կողմից իբր գրված նամակի վերաբերմամբ Բեսարաբիայի նահանգապետին. բայց, երևում է, որ բանը դրանով չէ սահմանափակվել։ Ինչպէս իմանում ենք նոյն «Times» լրագրից, նրա թղթակից Բրագամ ստիպված էր թողնել Ռուսաստանը ոչ իր ազատ կամքով։

—

Կիևի պոլիտեխնիքական ինստիտուտի խորհուրդը ֆինանսների մինիստրութեան միջոցով հարց է բարձրացրել, որ թոյլ տրվի կադետների կորպուսներում և գիւղատնտեսական միջնակարգ ուսումնարաններում աւարտածներին մտնել այդ ինստիտուտը։ Բացի սրանից խորհուրդը միջնորդութիւն է յարուցել կառավարութեան առաջ և խնդրում է թոյլ տալ հոգևոր դպրոցներում և տեխնիքական չորս դասարանեան ուսումնարաններում աւարտածներին մտնել ինստիտուտի տեխնիքական բաժանմունքը։

—

Վերջնականապէս վճռված է երկաթուղային գծերի վրա վարձով ազատ ծառայողներին տալ պետական ծառայութեան արտօնութիւններ։ Այս հարցը արդէն մշակված է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ և շուտով կը ներկայացնվի պետական խորհրդի քննութեան։

—

Կայսերական Մարդասիրական ընկերութեան խորհուրդը մտադրութիւն ունի չինել Պետերբուրգում և Մոսկվայում երկու հակայական տներ, որոնցից իւրաքանչիւրը պէտք է պարունակէ իր մէջ 600-ական մանր էժանագին բնակարաններ աշխատաւոր դասակարգի համար։ Իւրաքանչիւր բնակարան բաղկացած կը լինի 1—3 սենեակներից. վարձը իւրաքանչիւր սենեակի համար վառելիքի հետ միասին կը լինի ոչ աւելի 5 ռուբլուց։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից. «Վերջերին նայելով, մօտ օրերումս հաստատվել է կանանց բարձրագոյն կուրսերը բարեփոխման ենթարկելու նախագիծը, որի հիման վրա կուրսերը թէ իրանց ծրագրով և թէ մասամբ իրաւունքներով հաւասարեցնվում են համալսարանների հետ։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մայիսի 18-ին տեղիս հայոց դպրոցի պանիխիդում կայացաւ ծխականների երկրորդ ժողովը մի և նոյն խնդրի՝ հոգաբարձական կազմի ընտրութեան համար։ Մայիսի 4-ին ընտրված 3 հոգաբարձուներից երկուսը հրաժարվեցին, պատճառաբանելով, թէ ներկայ պայմաններում, երբ իրանք դեռ դպրոցի չէնքը ոտք չը կոխած լրագրական ծաղրի ենթարկվեցին (ռուս թերթի մէջ) մի ինչ որ աղայացած նախկին ուսանողի կողմից,—չեն կարող յուսալ, որ չափելի օգուտ կը բերեն ուսումնարանին։ Ամենալաւն էր, ի հարկէ, Կրիլովի առակը մտաբերելով, ուշադրութիւն անգամ չը դարձնել դռնատակից լսվող խօսքերի վրա։ Իրանց բաներեցրած ազնուութիւնով նրանք մի նոր միջոց տուին մի երկու անձանց քանդելու ամեն մի իրանց քմահաճոյքին անհամապատասխան նոր կարգադրութիւն։ Սակայն հասարակութիւնը, ինչպէս այդ ցոյց տուեց նոր ընտրութիւնը, աւելի խոհեմ գտնվեց. նա վերընտրեց նոյն երկուսին, աւելացնելով դրանց վրա էլի երկուսը, այսպիսով ներկայումս դպրոցը ունի 7 հոգաբարձու՝ աւագ քահանայ Ա. Կոպչակճեանց, երէցփոխ պ. Սուքասի, Ս. Թոփալեան, Ռ. Խաչաբեան, Ա. Թըղլիեան, Ա. Քարաքաշ և Գ. Սպենդիարեան։ Հետաքրքրական էր ինքը, ընտրողական ժողովը։ Նախագահ հայր Կոպչակճեանի կարճ խօսքերից յետոյ պ. Դոդոխեան թոյլտութիւն խնդրեց խօսելու. ներկայ գտնվող պ. Քուշներեան, որ հեղինակն էր տեղական ռուս թերթի միջի հասարակութեան բարի անունը արատաւորող երկու նամակների, դուրս եկաւ դահլիճից և ներս մտաւ միայն պ. Դոդոխեանի լռելուց յետոյ։ Ինչ էր ուզում սրանով ցոյց տալ պարոնը, այդ չը հասկացվեց։ Պ. Դոդոխեան պնդում էր, որ դպրոցի ամենապայծառ ժամանակներն էին Ս. Բահաթրեանի հոգաբարձութեան օրերը, երբ հասարակութիւնը հազարներ չը խնայեց և կանգնեցրեց դպրոցի այժմեան փառաւոր շէնքը։ Պ. Սեկինեան, որ 14 տարի հոգաբարձութիւն է արել, ըողոքեց դրա դէմ. և իրաւունք ունէր. ինչպէս չը բողոքէր, քանի որ իրա դափնեայ պսակն էին փետրատում։ Ժողովը թողնում էր մի շատ խայտառակ տպաւորութիւն. լսող չը կար մէջտեղը, որովհետև ամենքն էին խօսում։ Իւրաքանչիւրը աշխատում էր իր մաղձը թափել, մոռանալով ժողովի իսկական նպատակը»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Մայիսի 18-ին հասարակական ժողովարանի ամարային թատրոնում կայացաւ տեղական հայ սիրողների ներկայացումը, մասնակցութեամբ տ. Բալասանեանի և օր. Խաղիեանի. խաղացին «Կախարդված Գրինց» և «Սուտ Ճգնաւոր» պիեսները։ Ընդհանուր առմամբ խաղը անցաւ բաւարար։ Մուտքը աջող համարել չէր կարելի. տեղերի գները էժանացրած էին։ Մեզ միայն անչափ ցաւ էր պատճառում հաստատիր ազատների վերաբերմունքը։ Երևակայեցէք, ընթերցող, որ քաղաքիս մեր այդ առաջնակարգ տուզերը գալիս մտնում են այդի և առանց խնայելու թղթախաղի ու լօսոյի մէջ տասնեակ ռուբլիներ են ցրիւ տալիս, փառաւոր ընթրիքների համար աջ ու ձախ շռայլում, սակայն նոյն այգու խուսար անկիւններից մէկում կուռ եկած թատրոնը մտնելու համար զլանում են միմիայն մէկ ու կէս ռուբլի մուտքի փող վճարելու»։

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԻՍՆԱՄԵԱՑ ՕՐԵԼԵԱՆ ՄԸ

1853—1903

—

Անտարակոյս՝ «իրաւագովութիւն» պիտի չը հասարուի ընթերցողաց կողմանէ, եթէ «Հանդէսի» խմբագրութիւնը այսօր ընդարձակ տեղ մը կու տայ իր գործակից-խմբագիրներէն մէկուն։ Անուններ կան՝ որ ստէպ կը կարդացուին, բայց կան անուններ ալ՝ որ կարդացուելու համար՝ թղթի և թանաքի չեն կարօտիր, երբ արդէն իրենց շուրջը կուտակած, դիզած են հանակրողներու խմբեր։ Ասոնց կարգէն է Վեր. հ. Եղիշէ վ. Գաֆթանեան՝ «Հանդէսի» գործակիցը։ Փութանք ըսելու, որ «Հանդէսի» հայ բանասիրական մասին առատ նիւթ մատակարարող և ամենէն գլխաւոր լուսաւորիչ գործողն եղած է հ. Գաֆթանեան։ Ոչ թէ քաղաքավարական՝ այլ շնորհապարտ զգաւում մըն է, որ կը մղէ զմեզ այսօր՝ ի մասաւոր ծանօթացնելու «Հանդէսի» ընթերցողաց այս ծերունին, որ իր գործունեայ կեանքը սկսած է ի ծածուկ, կը շարունակէ ի ծածուկ և պիտի փափաքէր անշուշտ մնալ ապագային ալ՝ ի ծածուկ, և շատ դժուարաւ պիտի հասակրի «խմբագրութեան» այս ձեռնարկին, որով հրապարակաւ կը ներկայացնենք զինքը՝ այն դրից մէջ, որուն մէջ կը գտնեն զինքն ըստ մեծի մասին իւր այցելու բարեկամները...։

Բայց տեսնենք զինքը իւր մանկութեան մէջ, իւր «առն կատարելոյ» հասակին՝ և իւր ալեոր օրերուն մէջ։

Անտոն Գաֆթանեան՝ այս է Օրելեարի աւազանի անունը, 1828 օգոստոս 15-ին ի Կ. Պոլիս՝ Ղալաթիա թաղը տեսաւ առաջին անգամ աշխարհիս լոյսը։ 7—8 տարեկան հասակին մէջ կը յաճախէր Վենետիկի Մխիթարեանց դպրոցը, որ կը գտնուէր նոյնպէս ի Ղալաթիա, այժմու Ս. Լուսաւորիչ եկեղեցու դիմացը՝ «Քիւչիք Բարմագ գափու» կոչուած անել փողոցին անկիւնը, հ. Անանիա Ճելալեանի վարչութեան օրերը։ Տարրական ուսմունքն աւարտելէն ետքը կանցնի 1840-ին, նոյնպէս ի Կ. Պոլիս Վիէննական Մխիթարեանց դպրոցը՝ զոր կը վարէր այն ատեն հ. Թովմաս Սեբաստեան։ 1844 յուլիս ամսոյն կը գտնենք զինքը 4 ընկերներով ի Վիէննա, ուր շատ արագ կանցնի նախապատրաստական ասաքիմաններէն (1848 ուխտագիր կըլլայ, 1852-ին «4 ասաքիմաններ» կառնու, 1853-ին կիսասարկաւագ, քանի մը ամիս ետքը սարկաւագ) և 1853 մայիս 1-ին կը բարձրացուի յաստիճան քահանայութեան։

Քահանայութեամբ է, որ սովորաբար Վիէննական Մխիթարեանի մի «առն կատարելոյ» շրջանը կը սկսի։ Ա՛յ այնուհետև վանական պաշտօններու «բեռը» կը սկսի ծանրանալ հ. Գաֆթանեանի ուսերուն վրա. 1854-ին բ. վերակացու կը կարգուի Մայր Վանքին մէջ։ Այս պաշտօնին մէջ կը մնայ մինչև 1860 հոկտ. ամիսը։ Նոյն տարին կառաքուի ի Զմիւռնիա, 1861-ին նոյնպէս հոկտ.-ին կուգայ ի Կ. Պոլիս և Վարժարանի մէջ ունեցած դասաւորութեան պաշտօնէն զատ՝ 33 տարեկան հասակէն կը սկսի իր սիրական զբաղմունքը։

Միշտ նկատուած է՝ ինչպէս ծանօթ է արդէն, մարդու մը նախասիրած մէկ ճիւղը՝ գրեթէ 20—30 տարիներ յառաջ՝ մանր դէպքերու և պարագաներու մէջ կը գրաւէ զինքը. ի սկզբան անդ անորոշ և տարտամ, բայց երթալով կը զօրանայ սրտին մէջ փափաքը՝ լիովին փարելու այն ճիւղին։ Զարտուղութիւն չէր կրնար կազմել Հ. Գաֆթանեան։ 1861-ին ինքնին կը ձեռնարկէ Կ. Պոլսոյ Վանատան մատենադարանը կարգի կանոնի տակ առնելու և սկիզբ ելը դնէ այն գրոց ցանկերուն, որ միշտ մնաց ապագային ալ՝ աւելի մեծ ընդարձակութեամբ իւր գլխաւոր սիրական գործը։ Թէպէտ մինչև 1876 կը գտնենք զինքը իբր Վարիչ Կ. Պոլսոյ Վարժարանին, ժողովրդապետի օգնական, Հոգաբարձու, նոյն պաշտօններով ի Բրրիեստ, ի Զմիւռնիա, յԱյտրն, բայց վերջապէս կը հաստատուի ի Կ. Պոլիս իբր մատենադարանապետ, և իբր խոստովանահայր։ Հայ-կաթողիկէ հասարակութեան մեծամասնութիւնը կը ճանչնայ զինքը այս վերջին յատկութեամբը՝ իբր աննկուն գործող մը և այսօր «Տիպարխոստովանահայր» անունը զուգած է իւր «բանաձէր-հաւաքիչ» դեղեցիկ մէկ յատկութեանը հետ։ Եւ երբ 50 տարի ետքը՝ այսօր պիտի մատուցանէ իւր ս. պատարագը, ապահով ենք որ ներկաներէն չորսին երեքը այս ծերունի յորելեարին «որդիներն են...։ Փութանք ի պարծանս աւելցնելու, որ Մխիթարեան մը յատուկ հաւատարմութեամբ՝ կանոնապահութեան առաջին տիպարներէն հանդիսացած է իւր գործեց օդի մէջ։ Եւ խղճալի, վախլուկ ճրագների պէս լոյս էին տալիս մշուշի մինչև հեռաւոր երկնքի վրա հեռաւոր, անզօր և անվրանգ աստղերը։

—

Անցան տարիներ։ Առաջվայ պէս խոնաւ մթութեան մէջ ծնվում, մեծանում, սիրում և մեռնում էին մարդիկ, առաջվայ պէս կեանքը խաղաղ և անդորր էր թւում։ Բայց խորին յուզմունքը և անբաւականութիւնները մաշում էին կեանքը խաւարի մէջ։ Մարդիկ ճիգ էին թափում և չէին կարողանում մոռանալ այն, թէ ինչպէս լուսաւորում էր պայծառ աստղը իր թոուցիկ լոյսով։ Թունաւորված էին նախկին անդորր ուրախութիւնները, սուտը թափանցել էր ամեն բանի մէջ։ Երկիւղածօրէն աղօթելով հեռաւոր աստղին, մարդը սկսում էր մտածել՝ «իսկ թէ յանկարծ դուրս գայ մի ուրիշ անխելքը և բերէ այդ աստղը այստեղ, մեզ մօտ»։ Եւ նրա լեզուն սկսում էր թրթռալ և ջերմեռանդ աւետումը փոխվում էր երկչոտ սարսուռի։ Հայրը սովորեցնում էր որդուն, թէ դէպի աստղերը ձգտելն է մարդուս կեանքն ու երջանկութիւնը,—և յանկարծ նրա մէջ յղանում էր այս միտքը. «իսկ եթէ իսկապէս իմ որդու մէջ վառվի ձգտում դէպի աստղային կայ և կը չքանայ սև մշուշը, պարզ ու պայծառ կը կանաչեն ծառերը, և նրանք, որոնք այժմ կատաղած յարձակվում են աստղի վրա, կամայակամայ կը ձեռնարկեն կեանքի բարեփոխութիւններին։ Չէ՞ որ այժմ նրանց բոլոր ոխը հէնց այն բանից է, որ լոյսի ներկայութեամբ, նրանք զգում են,—որ անհնարին է ապրել այնպէս, ինչպէս ապրում են։ Եւ կեանքը կը դառնայ մեծ և մաքուր, և դեղեցիկ կը լինի այն մեր արիւններով կերակրվող աստղերի ճաճանչափայլ լոյսի ներքոյ։ Իսկ երբ, վերջապէս, կիլնէ մեզ մօտ աստղազարդ երկինքը և կը լուսաւորէ կեանքը, նա կը տեսնէ որ կեանքը արժանի է լոյսի, ու այն ժամանակ էլ հարկաւոր չի լինի մեր արիւնը, որպէս զի աբնունդ ատանայ այդ յաւիտենական և անանցնելի լոյսը...

Ադէիլի ձայնը կտրվեց. արիւնի վերջին կաթիլները անյայտացան նրա գոհար դէմքից։ Եւ ծալվեցան աստղակրի ծնկները, և նա վայր ընկաւ, իսկ նրա հետ միասին վայր ընկաւ աստղը,—վայր ընկաւ, փշրվեց արիւնոտ կեղտի մէջ ու հանգաւ։

Եւ ամեն կողմից ներս խուժեց սև խաւարը և պատեց հանգած աստղի շուրջը. կեանք առած մշուշը բարձրացաւ երկրից և պատեցին ամեն մի իրանց քմահաճոյքին անհամապատասխան նոր կարգադրութիւն։ Սակայն հասարակութիւնը, ինչպէս այդ ցոյց տուեց նոր ընտրութիւնը, աւելի խոհեմ գտնվեց. նա վերընտրեց նոյն երկուսին, աւելացնելով դրանց վրա էլի երկուսը, այսպիսով ներկայումս դպրոցը ունի 7 հոգաբարձու՝ աւագ քահանայ Ա. Կոպչակճեանց, երէցփոխ պ. Սուքասի, Ս. Թոփալեան, Ռ. Խաչաբեան, Ա. Թըղլիեան, Ա. Քարաքաշ և Գ. Սպենդիարեան։ Հետաքրքրական էր ինքը, ընտրողական ժողովը։ Նախագահ հայր Կոպչակճեանի կարճ խօսքերից յետոյ պ. Դոդոխեան թոյլտութիւն խնդրեց խօսելու. ներս եմ ձեզ մխիթարել. իմ ատաղը երկար չի լուսաւորէ։ Այնտեղ, հեռու երկնքում, կախված են ատաղները և իրանք իրանց լոյս են տալիս, բայց երկնքից պոկված և երկիրը բերած ատաղը կարող է լուսաւորել միայն, մնունդ ստանալով ատաղը ձեռքում բռնողի արիւնով։

Ես զգում եմ, որ իմ կեանքը, կասես թէ կանթեղի մէջ, բարձրանում է իմ մարմնի միջով դէպի ատաղը և այրվում է այնտեղ. մի փոքր ևս, և իմ կեանքը կայրվի ամբողջապէս... Եւ ոչ ոքի էլ յանձնել ատաղը անկարելի է. նա մարում է նրան կրողի կեանքի հետ միասին, և ամեն մէկը պէտք է նորից ձեռք բերէ ատաղը։ Եւ ձեզ եմ դիմում ես, ազնիւ և անվեհեր սիրտ ունեցողներ, ձեզ, որ ընդունելով լոյսը, այլ ևս չէք կամենայ ապրել խաւարի մէջ։ Գտնացէք հեռու ճանապարհը և բերէք այստեղ նոր ատաղներ։ Երկար և ծանր է այդ ճանապարհը, բայց այսու ամենայնիւ ձեզ համար դա արդէն աւելի հեշտ կը լինի, քան թէ մեզ համար, որ առաջին անգամ զոհվեցինք. կածանները բացված են, ուղիները որոշված. Եւ կը վերադառնաք ատաղներով, և նրանց լոյսը չի վերջանայ երկրի վրա,—իսկ նրանց անչէջ լոյսի ներքոյ անկարելի կը դառնայ այնպիսի կեանքը, ինչպէս այժմ է։ Լեռները կը չորանան, ամենայն տարիներ։ Առաջվայ պէս խոնաւ մթութեան մէջ ծնվում, մեծանում, սիրում և մեռնում էին մարդիկ, առաջվայ պէս կեանքը խաղաղ և անդորր էր թւում։ Բայց խորին յուզմունքը և անբաւականութիւնները մաշում էին կեանքը խաւարի մէջ։ Մարդիկ ճիգ էին թափում և չէին կարողանում մոռանալ այն, թէ ինչպէս լուսաւորում էր պայծառ աստղը իր թոուցիկ լոյսով։ Թունաւորված էին նախկին անդորր ուրախութիւնները, սուտը թափանցել էր ամեն բանի մէջ։ Երկիւղածօրէն աղօթելով հեռաւոր աստղին, մարդը սկսում էր մտածել՝ «իսկ թէ յանկարծ դուրս գայ մի ուրիշ անխելքը և բերէ այդ աստղը այստեղ, մեզ մօտ»։ Եւ նրա լեզուն սկսում էր թրթռալ և ջերմեռանդ աւետումը փոխվում էր երկչոտ սարսուռի։ Հայրը սովորեցնում էր որդուն, թէ դէպի աստղերը ձգտելն է մարդուս կեանքն ու երջանկութիւնը,—և յանկարծ նրա մէջ յղանում էր այս միտքը. «իսկ եթէ իսկապէս իմ որդու մէջ վառվի ձգտում դէպի աստղային լոյսը, և նա էլ, Ադէիլի նման, գնայ աստղի ետևից ու բերէ երկիրը»։ Եւ հայրը շտապում էր բացատրել որդուն, որ լոյսը, ի հարկէ, լաւ է, բայց անխելք բան է փորձել իջեցնել լոյսը երկիրը, որ եղել են այդպիսի անխելքներ, և նրանք անպատիւ կերպով կորել են՝ կեանքի համար բոլորովին անօգուտ։

Նոյն բանն էին սովորեցնում մարդկանց քուրմերը, նոյնն էլ ապացուցանում էին գիտնականները։ Բայց ապարդիւն էին հնչում նրանց քարոզները. մէկ էլ տեսնում էիր լուր տարածվեց, թէ այս ինչ պատանին կամ աղջիկը գնացին հայրենի բնից։ Ո՞ւր. գուցէ թէ Ադէիլի ցոյց տուած ճանապարհով։ Եւ սարսափով զգում էին մարդիկ, որ եթէ կրկին փայլի լոյսը երկրի վրա, պէտք է կամայակամայ ձեռնարկեն վերջապէս մի ահագին աշխատանքի, և դրանից անկարելի կը լինի այլ ևս փախչել ոչ մի տեղ։ Եւ մի անորոշ անհանգստութեամբ ուշադիր նայում էին նրանք հեռու, մութ հորիզոնին, և թւում էր, թէ իրանց վրա արդէն սկսում է փայլփլել մօտեցող աստղերի դողդողուն շողը։

Կ. Կրասիլնիկեան

կրօնակից եղբարց մեր յոբելեարը, իւր «աշխարհածանօթ» հեզութեամբը և հլութեամբը։ Բայց ներբող մը չենք ուզեր հիւսել։ Դառնանք իւր գրական գործունէութեան։ Կարելի է սակայն բոլորովին անկողմնակալ ոգւով գրիչ շարժել պատուական ծերունւոյ մը վրայ, որ գրաւած է ոչ թէ խմբագրութեան մը միայն, այլ նաև Կ. Պոլսոյ և հեռաւոր ու մերձաւոր ծանօթներու սիրտը...։ Տիգրան Արփիարեան կարելի է ըրած այս դժուարին կէտը, 1893-ին «Մասիսի» մէջ (թիւ 4000) գրածներովը, և գրեթէ 10 տարի ետքը ոչինչ կը գտնենք աւելցնել այս հրապարակագրին խօսքերուն վրայ, վասն զի այն յիշատակեալ գործունէութիւնն ոչ թէ նուազած չէ, այլ նաև գերազանցօրէն տարածապակված։ Զենք կրնար այն յօդուածի քանի մը կտորները յառաջ չը բերել հոս, որոնք կարծես լուսանկարչային ճշտահաւատութեամբ կը պատկերեն հ. Գաֆֆթանեան իր իսկութեան մէջ։

«Վանատան հին մէկ սրահին մէջ, պատկերներով ու մատենադարաններով լեցուն, խոշոր սեղանի մի առջև կքած՝ տարիքով ծեր և մարմնով ու մտքով աշխոյժ վարդապետ մը, մեծ բաժին մը կը կենտրօնացնէ իր վրա իր եղբայրակիցներու այդ գործունէութեան. առաւօտը իր պատարագին կը հասնի, ցորեկը այցելութիւններուն, գիշերը վանական ծառայութիւններուն, և չեռ գիտեր երբ կը գտնէ ժամանակ այնքան մանրակրկիտ ու յոգնեցուցիչ աշխատութիւններ կատարելու, որոց մէկ մասը տեսանք՝ հայ լրագրութեան վրա երևցած նոր գործին մէջ։ Հ. Գրիգորիս վ. Գալէմքարեան, այդ բազմաշխատ գրքին երիտասարդ հեղինակը, սա տողերով կը յայտնէ իր երէց աշխատակցին մասնակցութիւնը։

Եթէ այս և յաջորդ շրջաններու մէջ յիշուած լրագիրներու ամբողջական տարիներն անձամբ տեսնելու բախտ ունեցայ, զայն կը պարտիմ վ. հ. Եղիշէ Գաֆֆթանեան վ.-ին, որուն երկարատև ջանիւն միաբանութեանս մատենադարանին հայ լրագրաց ժողովածոյքն այս օրս՝ որչափ գիտեմ՝ մի միակ հարուստն և գրեթէ ամբողջացածն է»...

Վաթսունը հինգ (հիմա՝ 75) տարեկան վարդապետ մըն է հայր Գաֆֆթանեան և քանը հինգ տարիէ ի վեր ձեռնարկած է բոլոր հայ լրագրաց ցուցակն ու դասակարգութիւնը պատրաստելու։ Քանը հինգ տարին, նոյն իսկ գրով գրուած, որքան կարճ ու կոկիկ է թուղթի վրա, բայց մտածել անգամ մը իրական քառորդ դարու մը երկարութեան, որոց միջոցին կը պրպտես, կը վազես, կը թղթակցիս, կը գնես, քանի մը հարիւր երեսով հատորիկի մը մի միայն նիւթը պատրաստելու համար, և այդ միջոցին կրուած պատրանքները, զգացուած ուրախութիւնները, հոգեկան ու մարմնական ինչ յոգնութիւն կը պատճառեն»...

Եւ հոս պ. Տ. Ա. օրինակով մը՝ այսպէս ըսենք—չջափելի կրնէ այն դժուարութիւններն, որ այսպիսի հաւաքածոյի մը հետ կապուած են։ Հետաքրքիրները կրնան կարդալ այս ամենը՝ «Մասիսի» նոյն թուին մէջ։ Կը շարունակէ յօդուածագիրը.

«Ծերունի Մխիթարեանը... ձեռնարկած է պատրաստելու հայերէն տպագրուած բոլոր գրքերու հաւաքածուն *)։ Կատարեալ հնախոյզի գործ, որ կը պահանջէ հմտութեան չափ հետաձգող ոգի և մաւորականէն աւելի նիւթական զոհողութիւն. այս գնահատելի աշխատութիւնն ալ բաւական առաջ տպուած է արդէն **). մէկ կողմէն՝ հ. Գաֆֆթանեան կը պրպտէ Պոլսոյ չորս անկիւնները, հին գրատուները, ծեր պատուելիներու և անկեալ դրագէտներու մատենադարանները և միւս կողմէ կը զրկէ Վիենայի վանքը. եթէ ձեռք բերած հատորը, հին կամ նոր, կրկին օրինակ է, հատ մը իր քով կը պահէ։... Բայց հ. Գաֆֆթանեան՝ խոշոր տեսակի մը մէջ մանրիկ գրերով նշանակած է իր բոլոր առաքումները, որք պատկառելի թիւի մը կը հասնին, կը գուրգուրայ այդ ցուցակին վրա, իբր հոգեհատոր առարկայ մը, և այդ սովորաբար անխօսուկ վարդապետը՝ ատենապան մը կը դառնայ, երբ կը հարցափորձես զինքը՝ իր գրքերուն վրա։ Շատ իրիկուն, մութին, վանատուն կը դառնայ թեթևոտն ու զուարթ դէմքով, վերարկուին տակ պահած ծրար մը։ իր եղբայրակիցները կը հասկնան իսկոյն թէ դարձեալ հին գրքեր գտած է»...

Զենք շարունակեր այս յօդուածը՝ Վեր. Յոբելեարին համեստութիւնը չը վիրաւորելու համար. սակայն հարկ է իր գրական զբաղմանց մէջ տեսնել զինքը, համոզուելու համար թէ իւր գործին մարդն է։ Կ. Պոլսոյ դրագէտները գործնականապէս իսկ գիտեն յարգել զինքը և իրենց շնորհակալութիւններն յայտնելէն չեն դադրիր, եթէ այսպիսի գրական նիւթի մը համար՝ ստիպուին հ. Գաֆֆթանեանին դիմել։ Միշտ դիւրապատասխան՝ իրմէ խնդրուած տեղեկութիւններն տալու, խնդրուած լրագրի թուերը կամ գրքի հատորները հանելու և անոնց առջևը դնելու և ի հարկին կարևոր մեկնութիւններն ու լուսաբանութիւնները տալու։ Այս ալէզարդ ծերունին ալ իրեն համար շինած է մանագիտական ճիւղ մը, շատ կանուխէն սկսած, փութով յառաջ տարած, ամենն նոր հրատարակութիւններէն օգտուած, վերջալոյս ժամանակի ընթացքին հետևած և ապագային համար մի ն նոյն երիտասարդական կորովով դեռ յոգնելու կազմ և պատրաստ—

Հ. Եղիշէ Գաֆֆթանեան՝ իր պաշտօններուն և ընտրած ճիւղին բերմամբը, ժամանակ ունեցած չէ գրոց հրատարակութեամբն ալ զբաղելու։ Իւր ուսուցչական պաշտօնին մէջ ջանացած է գործնականապէս ալ օգտակար ըլլալ իւր աշակերտաց՝ քանի մը դպրոցական գրքեր հրատարակելով։ Մանկուոյն ընթերցանութեան համար հրատարակուած կը գտնենք իրմէ՝ «Եղիսաբեթ» խաչակրաց ժամանակէն վէպ մը, (տպ. 1858). իսկ իւր դասագիրք՝ հրատարակած է՝ «Պատմութիւն հին և նոր կտակարանաց (ս. Գրոց Պատմութիւն), ստորին դասու համար, որ 3 տպագրութիւն տեսած է. (Ա. տպ. 1860-ին, Բ. տպ. 1871, Գ. տպ.—ընդարձակեալ—1883)։ Ունինք նոյնպէս իրմէ՝ «Սկզբնական ընթերցուածք» գաղ. և հայ. տպ. 1872-ի, որ իւր պարզ անուան հակառակ՝ բաւական դժուարին գործ մը կը նկատուի, ըստ որում գաղղ. բնագրին դիմացը՝ բառացի հայերէն թարգմանութիւնը դնելէն զատ, իւրաքանչիւր գաղ. բառին ալ ճիշտ նշանակութիւնն կուտայ՝ աւելցնելու համար տղոց բառամթերքը։ Յիշենք նաև «Բովանդակութիւն գիտութեանց և արուեստից» գեղեցիկ աշխատասիրութիւնն ալ։

Ուրախալի երևոյթ մը կը համարինք, որ Վեր. Յոբելեարը գիրք հրատարակելն իրեն գլխաւոր կէտ նպատակի չէ ընտրած։ Գիրք, դասագիրք, պարբերագիրք և այլն շատերը կրնան հրատարակել՝ քիչ շատ յաջողութեամբ, բայց օրն ի բուն գրատուները դեգերիլ, գրադարաններու փոշիներու մէջ թաւալիլ, գրքերու հինն ու նորը իրարմէ զատել, մանր նշանակել, համեմատել, գնել, ծախել, այնպիսի զբաղմունք են, որ շատ քիչերու ձիրքն են։ Մասնաւոր փափաք, յարում ունենալու է մարդ այսպիսի կարևոր և սակայն շատ տաժանակիր աշխատութիւնը մը յաջողութեամբ սկսելու և մանաւանդ տոկուն յարատևութեամբ շարունակելու համար. այս փափաքն ու յարումը լիովին կը տեսնենք մեր ալէզարդ Յոբելեարին վրայ։

Հայ գրականութեան այսպիսի կարևոր ծառայութիւններ մատուցանող Յոբելեարին ի պատիւ սարքուած հանդիսութեանց մասնակցողներու ձայնակից ըլլալով, խմբագրութիւնս ալ կը փութայ իւր ջերմաջերմ իղձերը մատուցանել Բարձրելոյն, որ հաճի դեռ երկայն և առոյգ կեանք մը պարգևել մեր Հ. Եղիշէ Վ. Գաֆֆթանեանին։ Անոր երեք քառորդ դարու կեանքն հաճի Ամենատէրը երկարել մինչև ամբողջական դար մը, և աւելի, որպէս զի ապագայ սերնդեան հետ ինքն՝ Յոբելեարն ալ, կարենայ իւր հաւաքածոյից ամբողջական տպագրութիւնն տեսնել։ Այս է, գիտենք, Յոբելեարին սրտին մի միակ բաղձանքը. բայց նաև իւր խուռներամ համակրողներու իղձն ալ այս է։ Թող ապահով ըլլայ Վեր. Յոբելեարը, որ շատ հազուագիւտ է՝ զինքը ճանչցողներու մէջ գտնել մէկը, որ իրեն նման անչշուկ և լռիկ, հնչիկ գործող գրական վաստակաւորի մը յարգն ու մատուցած ծառայութեանց կարևորութիւնը յարգել չգիտնայ։ Եւ կրկնապատկուի պիտի այս արտազեղ համակրութիւնն, երբ օր մը պիտի լոյս տեսնեն և ի վայելս բանասիրաց պիտի ընծեռուին այն երկերն, որ տարիներու քրտինքներով շաղախուած, գիտենք թէ իւր սրտին ամենաջերմիկ մէկ անկիւնը գրաւած են։

Խմբագրութիւն «Հանդէս Ամսօրեայի»

*) Գ. հ. Գարեգին Զարպհանէլեանի „Մատենագիտութեան“ բաւական նիւթ մատակարարած է հ. Գաֆֆթանեանի սոյն մատենագիտական ցուցակը և սակայն առանց անուան յիշատակութեան՝ ընդհանուր խօսքերով պարզ շնորհակալութեան մը արժանացաւ...

**) Գէտք է աւելացնել հոս, որ այս վերջին 10 տարիներու մէջ կատարելագործուած „Հայ լրագրութեան“ հեղինակն ալ միացուցած է այս քրտնաթոր աշխատութեան իր բոլոր այժն ու կորովը, որով կը յուսանք թէ մատենագիտութիւնն ալ պիտի հրատարակուի օր մը ճիշտ քննադատական և պարզ ձևով, և պիտի ունենանք հոս ալ գիտական արժէք ունեցող կարևոր երկասիրութիւն մը։

ԱՆԳԼԻԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Պարսկաստանը նորից խօսեցնել է տալիս իր մասին և Անգլիայում վերջերս մի առանձին ուշադրութիւն են սկսել դարձնել այդ երկրի վրա։ Գրվում են յօդուածներ, լինում են դասախօսութիւններ և առ հասարակ առաջ է տարվում այն հայեացքը, թէ ժամանակ է որ Անգլիան լուրջ ուշադրութիւն դարձնէ Պարսկաստանի վրա և թոյլ չը տայ, որ ռուսական ազդեցութիւնը զօրեղանայ։ Միաժամանակ լուր են տարածվում անգլիական մամուլի մէջ, որ Պարսկաստանի մեծ վեզիր աթաբէկը վերջերս սկսել է դարձեալ հակել անգլիացիների կողմը։

Դօքտոր Ռիս, որ համարվում է Ռուսաստանը և Պարսկաստանը հմուտ ճանաչող, վերջերս կարդաց Լօնդօնում մի դասախօսութիւն Ռուսաստանի և Անգլիայի քաղաքականութեան մասին Պարսկաստանի վերաբերմամբ։ Նա հաստատացնում է, որ Ռուսաստանը՝ ձգտում է կլանել Պարսկաստանը, ուստի և պնդում է, որ անհրաժեշտ է լուրջ ուշադրութեամբ վերաբերվել այն վտանգին, որ սպառնում է Անգլիային, գլխաւորապէս Հնդկաստանին, ռուսաց ազդեցութեան զօրեղանալուց Պարսկաստանում։

«Ռուսաստանի քաղաքականութիւնը Պարսկաստանում—ասում է նա—ձգտում է տապալել անգլիական ազդեցութիւնը բոլոր դէպքերում։ Բրիտանական հպատակների սկսած և Ռուսաստանի կողմից խանգարված առևտրական ձեռնարկութիւնների թիւը—շատ մեծ է։ Բարոն Ռէյտերի երկաթուղին Ռէշտից Թէհրան, Քարուն-Սպահանեան խճուղին և ուրիշ շատ այդպիսի ծրագիրներ, որոնց իրագործումը պէտք է գլուխ գար բրիտանական դրամագլուխներով, տեղի չունեցաւ գլխաւորապէս այն պատճառով, որ Ռուսաստանը թոյլ չը տուեց Պարսկաստանին։ Անգլիական այդ մասնաւոր ձեռնարկութիւնների անպտղութեան վրա այսօր աւելանում է այն ծանր հարուածը, որ տրվում է բրիտանական առևտրին Պարսկաստանում պարսկական նոր մաքսային տարիֆով։ Ռուսաց առևտուրը Պարսկաստանի հետ 1889 թ-ից աճել է 125 տոկոսով, մինչդեռ բրիտանական ներմուծութիւնը նուազել է 33 տոկոսով, ինչ որ պէտք էր սպասել, որովհետև այնպիսի ընդհանուր գործածական նիւթ, ինչպէս թէյը, ենթարկված է մաքսի իր արժողութեան 95 տոկոսի չափ, մինչ դեռ առաջ միայն 5 տոկոսի չափ էր»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Յայտնի անգլիացի պատմաբան Ջոն-Մորլէյ, ազատամիտ կուսակցութեան պարագլուխներից մէկը, գրել է մի մեծ ուսումնասիրութիւն Գլադստոնի մասին, որը շուտով լոյս կը տեսնէ Լօնդօնում։

—Ամերիկայի խաղաղութեան ընկերութիւնը ներկայացրել է Մասաչուսէտ նահանգի պարլամենտին մի աղերսագիր, որով խնդրում է, որ Միացեալ-Նահանգների կօնգրէսը թոյլատրէ նախագահ Ռօզվէլտին ստանձնել մի պարբերական միջազգային կօնգրէսի նախաձեռնութիւնը։ Այդ կօնգրէսը կը քննէ վիճելի խնդիրները վերաբերեալ ազգերի ընդհանուր շահերին. ապա առաջարկութիւններ կանէ կառավարութիւններին այդ մասին և դրանով օգտակար ծառայութիւն կը մատուցանէ Հաւաքայի իրաւաբար բարձր ատեանին։ Այդ գաղափարը Միացեալ-Նահանգներում ժողովրդականացնելու համար մի արշաւանք է սկսված և մի քանի ամերիկական մեծ լրագիրներ առաջ են տանում այդ արշաւանքը։

—Վերջերս Եպաստիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Անգլիայի մէջ մի վէճ էր ծագել այն մասին, թէ արդեօք օտարահպատակները պարտաւոր են տուրք վճարել Եպաստիայում ունեցած անշարժ կալուածների համար։ Այժմ, այդ երկիրների կառավարութիւնները համաձայնութիւն են կայացրել վէճը ենթարկելու Հաագայի իրաւաբար մեայուն բարձր ատեանի քննութեան և որոշման։

—Հոսմից հեռագրում են «Новое Время» լրագրին. «Գրգռումները Աւստրիայի դէմ շարունակվում է բոլոր քաղաքներում։ Հոսմը գրեթէ պատերազմական վիճակի է ենթարկված։ Բօստանի «Արծուիկ» պիեսը ամեն տեղ հանված է բեմի վրա, որովհետև այդ պիեսը մեծ խռովութիւններ է յարուցանում։ Շատ քաղաքներում իշխանութեան միջամտութիւնը առաջ է բերում արիւնհեղութիւն։ Առհասարակ Իտալիայի վիճակը ներկայումս լուրջ է»։

—Մակեդոնիայի մասին «Новое Время» լրագրում տպված է հետևեալ յօդուածը. «Հերոագիրները Սօֆիայից, Կ. Պոլսից և Մակեդոնիայից օրէց օր աւելի յուզալից են դառնում։ Թէև լուրեր չը կան պատերազմական ընդհարումների մասին, թէև, վերջին ժամանակներս, ընդհակառակը, նոյն իսկ հանգստութիւն է նկատվում մակեդոնական ապատամբական խմբերի գործունէութեան մէջ, բայց այդ ամենը շատ նման է փոթորկից առաջ եղող հանգստութեան։ Գլխաւոր լծակները, ըստ երևոյթին, փոխադրվել են Մակեդոնիայից Սօֆիա և Կ. Պոլիս։ Բոլգարական կառավարութիւնը, որ ուղարկել է Նաչեվիչին Կ. Պոլիս, քիչ յոյս ունի նրա միսսիայի ազդեցութեան մասին, իսկ Թիւրքիայի պատերազմական կուսակցութիւնը և ֆինանսական վատ վիճակը հեշտութեամբ կարող են ստիպել սուլթանին պատերազմ սկսել բոլգարների դէմ։ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Կ. Պոլսում հերքում են այն լուրը, թէ իբր սուլթանը դադարեցնել է տուել զօրքերի առաքումը Փոքր-Ասիայից Մակեդոնիա։ Ընդհակառակը, զօրքերը շարունակում են գնալ դէպի Բոլգարիայի սահմանները։ Մի և նոյն ժամանակ Թիւրքական շրջաններում հաւատացնում են, որ մակեդոնական շարժման ներքին կազմակերպութիւնը, կորցնելով Դելչէվի և այլոց պէս ղեկավարներին, զրկված դրամից և զէնքից, անկարող է շարունակել ապատամբական շարժումը։ Սակայն այդ դէպքում հարց է ծագում. ինչու համար ուրեմն Թիւրքաց կառավարութիւնը անդադար շատացնում է և կենտրօնացնում է զօրքեր Մակեդոնիայում։ Արդեօք չը կայ այդտեղ գաղտնի դիտաւորութիւն՝ պատերազմ առաջ բերել Բոլգարիայի հետ։ Դա միակ ելքն է սուլթանի համար դուրս գալ այն ծանր վիճակից, որի մէջ գտնվում է Կ. Պոլսում, եթէ հաւատանք «Temps» լրագրի թղթակցին, յամառ կերպով պնդում են, որ Գերմանիան համարում է պատերազմը Բոլգարիայի հետ հնարաւոր ելքերից մէկը Թիւրքիայի համար։ Մեզ թւում, է սակայն, որ այս խնդրում գլխաւոր դերը խաղում է Թիւրքիայի ծանր ֆինանսական դրութիւնը. նա անզօր է պահել 200,000 զինուոր՝ զինաւորված։ Եւ ապա, երբ սահմանագլխում կենտրօնացած է այդպիսի զինուորական ոյժ, շատ դժուար է երաշխաւորել, որ ամեն մի բօպէ չի պատահի որ և է դէպք, որ առաջ կը բերէ պատերազմ։ Առհասարակ զայրոյթը երկու կողմից ևս, այն է Թիւրքերի և բոլգարների, միմեանց դէմ աճում է։ Սօֆիայում հրատարակվող «Реформа» լրագրում տպված է մի նկատողութիւն, որով Կ. Պոլիս ուղարկված Նաչեվիչը նախազգուշացնվում է, որ նա այն դէպքում, երբ անբաւարար բէֆորմներ կը բերէ և ոչ լիակատար ինքնավարութիւն, վերադառնայ ծովային ճանապարհով, որովհետև մակեդոնացի բոլգարները թոյլ չեն տայ, որ նրան տանող գնացքը անպատիժ անցնէ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

27 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 25-ին «Красное Село»-ում տեղի ունեցաւ Իզմայլովսկի գնդի լէյբ գվարդիայի տօնը։ Զօրահանդէս կատարվեց Բարձրագոյն ներկայութեամբ։ Պալատական սեղանատան վրանում պատրաստված էր նախաճաշ, որին հրաւիրված էր Նորին Կայսերական Մեծութեան շքախումբը, իշխանաւորները, գնդի հրամանատարը, օֆիցերները և ծառայող հոգևորականները։

Մայիսի 26-ին իրաւագիտութեան դպրոցում տեղի ունեցաւ հանդիսաւոր ակտ, որին ներկայ էին պրինց Պետրոս Ալէքսանդրովիչ Օլդենբուրգսկին և Նրա Ամուսինը։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Հայր Իոանն Կրօնշտատսկին երկու ամսով արձակուրդ ստացաւ և գնաց հայրենիք։

Կ. ՊՕԼԻՍ։ 280 ընտանիք անցան Զէրնօգորիայի սահմանից. նրանց զինաթափ արին և բերին երկրի խորքը։ Զէրնօգորիայի դեսպանը Կ. Պոլսում միջոցներ ձեռք առաւ նրանց հայրենիք վերադարձնելու համար։

ՐԻՍՏՕՎԱՑ, 14 կիլոմետր հեռաւորութեան վրա յայտնվեց 165 հոգուց բաղկացած մի հրոսակախումբ։ Ուղարկված զօրքը չրջապատեց խմբին և ոչնչացրեց։ Հրոսակները ռումբեր ունէին։

ԿՕԼՈՒՄԲԻԱ (Հարաւային Կարօլինա)։ Գետը 12½ ոտնաչափ բարձրացաւ և դեռ շարունակում է բարձրանալ։ Շատ դժբաղդութիւններ է պատահել մարդկանց և ունեցուածքի հետ։

ՍՕՖԻԱ։ Ռուսաստանը և Աւստրօ-Ունգարիան խորհուրդ տուին Թիւրքիային՝ դադարեցնել ձերբակալութիւնները, ազատել անմեղ բանտարկվածներին և հրաժարվել նրանց Տրիպոլի և Փոքր-Ասիա աքսորելուց։

Խիլմի փաշան Ուսկիւբից ուղևորվեց Դեսկօվ։

Պահեստի օֆիցէրները կանչված են մի շաբաթվայ ժամանակով զինավարժութեան համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՑԻԳԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Զինովպանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆՈՒՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻՆԳ.—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԽԱՅՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄՅԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԷՆԲԱՒՆՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախարհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ծ. Ց. ԱՌՎԱՆՈՑԱՆԻ—առաւ. ծագկահատ և բժշկական մարքամարզ. գիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

Վէպ Պարսկաստանի կեանքից

ՇԱՀՐԻԱՐԻ

ԳԻՆՆ Է ՄԷԿ ՌՈՒԲԼԻ

Ծախվում է. 1) Թիֆլիսում «Կենտրօնական» և «Գուտենբէրգ» գրավաճառանոցներում, 2) Բագուում «Գրօմէթէուս» գրավաճառանոցում։

4—10

ԱՏԱՄԻ ՈՒ ԲԵՐԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԲԺԻՇԿ

ԱԼ. ՄԱԾՈՒՐԵԱՆ

ՇՈՒՇՈՒՄ

սկսում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի 10-ից։ 9—12

ՇԱԳԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ Մ. ԱԴԱՄԻ ՈՐԴԻ

ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՆՕՎ

արհեստը սափրիչ է, երեսը քիչ ծաղկտ, Եալթայէն ելը եօթը տարի է. հասակը 30 տարեկան է. ի սէր ազգութեան, ով որ գիտէ, թող հաղորդէ Եալտա, Աւետիս Յարութիւնեանին.

Кофейня Аветиса Арутюняна, 5—10

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

ցանկանում է ունենալ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ կամ ԴԱՍՏԻԱՐԱԿՁՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆ հայ ընտանիքներում, Թիֆլիսում կամ այլ քաղաքներում Կարող է գնալ ընտանիքների հետ և ամառանոց։ Դիմել՝ Կրիլովսկայա փողոցի և Միքայէլեան պրօսպէկտի անկիւն, «Շամիրամ» ճաշարան, Մովսէս Յովհաննէսեանին։ 2—5

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բեբուտովսկայա փողոց № 41. տան Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 95—150

ՀԱԲԵՒԱՑԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

ՊԱՐՍԻՑ ԾՈՒՑԻ

ՉԻՑԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրու է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon B. G. Buchier Persian-Bulf. 97—100

☛ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԶԱՐԳԱՑԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ ՓԱՌԲԷՆ Է ☚

Էջմիածնայ ս. տաճարի զարդանկարելու համար, փարիզաբնակ, Պօլսոյ պալատները զարդարող, և եւրոպայէն գնահատուած նկարիչ պ. Պէզիրճեանը, որ Վեհափառէն հրաւիրված էր, պարագայէն օգտուելու գաղափարով, այս ամառ Կովկասում, առժամանակեայ փոքր մը որոշած է. կը յայտարարէ, թէ գեղարուեստը սիրող կարող անձնաւորութիւններ իրենց սալոնները պալատական և կամ եւրոպական առաջնակարգ չքեղ ձեւերով զարդարել տալու ցանկացողները, երբ պ. Պէզիրճեանի հետ պայմանի մտնեն, կանխաւ պէտք է վստահին, թէ ամեն տեսակ գոհացում ունենալու են։

Հասցէն՝ Малая-Ванкская ул., д. Потебня.

1—10

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՀԱՑ ԵՐԳԱՍԷՐՆԵՐԻ խմբի բոլոր անդամներին՝ չնորհ բերել ինձ մօտ հինգշաբթի, մայիսի 27-ին, Հաւլաբար, Էջմիածնի փողոց, № 33։

1—2 Ս. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

Նախկին օրդինատոր «Ս. Պետերբուրգի Աչքաբուժական Հիւանդանոցի»

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ընդունում է աչքի հիւանդութիւն ունեցողներին ամենայն օր.

Առաւօտեան ժամի 9-ին մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7

Հասցէն. Վելիամինովսկայա փ. տ. № 8։

2—10

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ

(Cansules au Matico)

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրված Ռուսաստանում։

—

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապսյբալզամը հեղուկ ձեւով։

—

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 28) 13—24

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թէպէտև զանազան պատճառներով որոշած էինք Բնաչխարհիկ Բաւարանի Բ. հատորն մէկ անգամով հրատարակել, սակայն մեր բաղմաթիւ բաժանորդաց խնդրանաց համեմատ, Բաւարանիս Բ հատորն լոյս պիտի տեսնէ երկու առանձին գրքերով։ Առաջին գիրքը որ պիտի բաղկանայ 50 քառածալ թերթերէ, զարդարված զուտ ազգային նորանոր գեղեցիկ պատկերներով, հաւանօրէն լոյս կը տեսնէ օգոստոսի վերջը, թղթակազմ բաղմագունի գեղեցիկ կողքով, և անմիջապէս կը դրկվի բաժանորդներուն։ Բաժանորդագրութիւնը դեռ կը շարունակվի։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ Ա ԵՒ Բ ԳՐՔԵՐՈՒ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է 15 ՖՐԱՆԿ ԿԱՄ 6 ՌՈՒԲԼԻ

Տեսչութիւն տպագրատան

2—4

Մ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆՑ

ԱԳՐՕՆՕՄ

Մասնագէտ գիւղատնտեսական զանազան ճիւղերի, ուսած Ֆրանսիայի Մօնպէլիէ քաղաքում. ևս առաւել կատարելագործած այդ գործական և գինեգործական մասնաճիւղերը, պաշտօն է խնդրում մասնաւոր կալուածներում։ Դիմել «Մշակի» խմբագրութեան։

5—5

Ներքին հիւանդութիւնների մասնագէտ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

այս ամառ ընդունելութիւն կունենայ ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ և ԷՍՍԷՆՏՈՒԿԻ։ 3—4

ԹԻՖԼԻՍԻ (торговая) ՍՈՒԽՈՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ. հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասի կողմից. ԴԱՍԸՆԹԱՑԸՐ ԵՌԱՄԵԱՑ է։ Առաջին դասարան ընդունվում են առանց քննութեան այն աշակերտները, որոնք աւարտել են իրանց ուսման ընթացքը քաղաքային ուսումնարաններում (1872 թ-ի կանոնադրութեամբ)։ Ուսման վարձը 80 ռուբլի է։

ԸՆԹԱՑԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ.

Անձնական պատասխանատու քաղաքացու կոչում՝ հինգ տարի առևտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ։ Պետական ծառայութեան մէջ իրաւունք՝ առանց քննութեան ստանալու առաջին աստիճանը (չինը)։ Զինուորագրութեան մէջ ընթացաւարտները կօգտվեն այն իրաւունքներով, որոնցով օգտվում են երկրորդ կարգի ուսումնարաններում աւարտողները.

Պարապմունքները սկսվում են սեպտեմբերի 1-ից։

Ծնդիրքները, մետրիկական, կոչման և ծաղկի պատուաստման վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առևտրական (коммерческій) ուսումնարանի դիւանատանը ամեն օր, ժամի 9-ից մինչև 2։

1—3

ԳԻԼԻՒԼՆԵՐ

CASCARA MIDY

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ժողովրդական միջոց

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հապ ը—2 պիլիւլ երեկոյեան, պառկելուց առաջ։

CASCARA MIDY (Կասկարա Միդի) չէ առաջացնում ստամոքսի մէջ ցաւեր, սրտի խառնում, կամ փորլուծութիւն։

Դեղատուն Midy, 113, faubourg, St-Honoré, Պարիզ, Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։ (28 մ. 5, 12, 19, 26, յ. 3, 17, 30 յլ. 14, 28 օ. 11, 25 ս. 9, 23 հ.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

«Էմինեան Ազգագրական Ժողովածու. գ. հատու, ժողովրդական հէքիաթ, հաւաքեց Ս. Հայկունի, գինն է	1 ր. 25 կ.
«Քուրդ բէգ», Շուտի, բ. հատոր (ա. հատորը 20 կ.)	20 »
«Զանգիլուսմ», 600 տուն, ժողովեց Հ. Տէր-Աստուածատրեան	30 »
«Մարդը և իր ցեղը» պրոֆէսոր Աքրէխտի, թարգմանութիւն Ծաղիկեանի	30 »
«Համառօտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան», Հ. Գէլցերի, գերման. թարգմանեց Մ. վարդ. Տէր-Մովսիսեանց	1 ր. — »
«Սև յաղթանակ», Բ. Այվազեանի, վէպիկ	25 »
«Ապուշը», թարգմ. օր. Ն. Աղանեան	5 »
«Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը», Տօլստոյի	5 »
«Անտառապետ Ֆրեդերիկ», թարգմ. Գ. ք. Աղանեանց	40 »
«Մանուկն իմաստուն և ատանան», թարգմ. Մատուլեան	20 »
«Զէյկաչը և հին ժամանակի պատմութիւնն», Մուշէ վարդապետ	25 »
«Բարոյական պատմութիւններ մանուկների համար	40 »
«Անահիտ»։ Աղայեանի	30 »
«Բարաբբա», թարգմանութիւն Պարպեանի	1 ր. 50 »
«Մակեդոնիա», Ա—Դ։	7 »

Դիմել.—Книжный магазинъ „Гуттенбергъ“, Тифлисъ, д. Лалаева, на Дворцовой улицѣ, Г. Галустяну. 1—3

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԴԱՊԷԺԳԱ“

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ դաշտերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը	1,650,000 ռուբլի
Պահեստի դրամագլուխը	2,664,808 »

Ի. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 800 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Ցեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ ամար եւ թէ պահեստներում ու խանութներում։

Ծանձնումն բեռների ուղարկիչների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր ֆոռներ ի հաշիւ ուղարկիչների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Ապահովութիւն բեռների ազատնալ պայմաններով ասացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ.)։

Բեռնափոխ եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (տիրիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատապէս ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, հատուցութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ш. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային հանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից հանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր իրերի, որոնք ուղարկվում են պատով, ցամաքային և ծովային հանապարհներով, հասարակական պատային գաղնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի աւելի 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի գլխաւոր ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտեյսկի պրոսպէկտի վրա, № 10-բորդ տեղը։

Լիքորներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բաքուում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆօն № 108 (Կ. տ. կ.) 85—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 26 Мая 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Ванкская ул.